DOI: 10.59560/18291155-2025.4-208

ՄԱՐԿ ԱԶԴԱՐԻԴԻՍ

ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքին՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելուն: Գլխավորապես, հոդվածի առարկան վերաբերում է հիշյալ՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանների օրենսգրքով ուղղակիորեն սահմանված բացառություններին:

Ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում խնդրո առարկա հարցի վերաբերյալ մասնագետների տարակարծությունը, վերաբերելի օրենսդրական կարգավորումների առերևույթ թերությունները, ինչպես նաև իրավադրույթի համապարփակ մեկնաբանման անհրաժեշտությունը, որը հենց հոդվածի գլխավոր նպատակն է:

Աշխատանքում փորձ է արվել համապարփակ մեկնաբանել իրավադրույթը՝ առանձին ուշադրություն դարձնելով խնդրահարույց և մասնագետների տարակարծությունն առաջացրած հարցերին: Մասնավորապես առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները.

▪ հանցանքների ո՞ր խմբին են վերաբերում ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «ավարտված» և «մարդու դեմ ուղղված» հատկանիշները,

▪ արդյո՞ք առկա է հակասություն ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի միջև,

▪ արդյո՞ք համապատասխանում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը վերջինիս կենսագործումը գործնականում ապահովելու համար անհրաժեշտ նյութաիրավական հենք հանդիսացող ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածին:

Հիմնաբառեր. օպերատիվ-հետախուզական գործունեություն, համագործակցող անձ, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, քրեական պատասխանատվությունից ազատել:

Ներածություն

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Նոր օրենսգիրք) զգալիորեն փոփոխեց ներպետական քրեական օրենսդրությունը՝ ներառելով նոր քրեաիրավական ինստիտուտներ, ինչպես նաև հայեցակարգային փոփոխությունների ենթարկելով գործող ինստիտուտները: Ի թիվս այլնի, էական փոփոխության են ենթարկվել քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները, որոնք 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Հին օրենսգիրք) անվանված էին արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ:

Հոդվածի ուսումնասիրության առարկան վերաբերում է հիշատակված փոփոխությանը՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն (այսուհետ նաև՝ ՕՀԳ) իրականացնող մարմինների հետ համագործակցելուն՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի իրավաչափության որոշ պայմաններին:

Հետազոտության շրջանակներում բարձրացվելու են նաև այն իրավական հարցերը, թե՝

- հանցանքների ո՞ր խմբին են վերաբերում Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «ավարտված» և «մարդու դեմ ուղղված» հատկանիշները,
- արդյո՞ք առկա է հակասություն Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի միջև,
- արդյո՞ք համապատասխանում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը վերջինիս կենսագործումը գործնականում ապահովելու համար անհրաժեշտ նյութաիրավական հենք հանդիսացող Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածին:

Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են պատմական և տրամաբանական, անալիզի և սինթեզի, ինչպես նաև դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

1.Քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի անհրաժեշտությունը

Դեռևս 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունված և նույն թվականի դեկտեմբերի 8-ին ուժի մեջ մտած «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսվում էր ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցության ինստիտուտը, իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, որպես ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց պաշտպանության երաշխիք, սահմանում էր, որ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք ազատվում են հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվությունից՝ օրենքով սահմանված կարգով:

Մյուս կողմից, մինչ Նոր օրենսգրքում քննարկվող քրեական պատասխանատվությունը ***բացառող*** հանգամանքի նախատեսումը՝ Օրենքում նշված իրավանորմի կենսագործումը գործնականում հնարավոր չէր, քանի որ բացակայում էր նյութաիրավական այն հենքը, համաձայն որի՝ նշված անձինք պետք է ***ազատվեին*** քրեական պատասխանատվությունից[1]: Քրեական պատասխանատվությունը բացառող այս նոր, որևէ երկրի քրեական օրենսդրությամբ նախատեսված ուղղակի համարժեքը չունեցող հանգամանքի նախատեսումը մեծապես միտված է նշված իրավական բացի լրացմանը[2]:

Հատկանշական է, որ վերոգրյալ տեսակետի հետ համաձայն չեն որոշ մասնագետներ, որոնք պնդում են, որ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելը կոնցեպտուալ նոր քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք չէ, այլ ընդամենն արդեն իսկ գոյություն ունեցող քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքի մասնավոր դրսևորում: Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք՝ ավելորդ չէ անդրադարձ կատարել ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելու և այլ համանման բնույթ ունեցող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների հարաբերակցությանը: Այսպես, ի տարբերություն ***անհրաժեշտ պաշտպանության*** և ***հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելուն,*** ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելու դեպքում վնասը պատճառվում է ոչ թե հակահիրավական ոտնձգություն կատարած անձին, այլ քրեական օրենքով պաշտպանվող այլ շահերին: Իր հերթին, խնդրո առարկա քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը տարբերվում է ***ծայրահեղ անհրաժեշտությունից*** նրանով, որ վնաս պատճառելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը բացակայում է: ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելը տարբերվում է ***հիմնավորված ռիսկից*** նրանով, որ առաջինի դեպքում վնասը պատճառվում է ուղղակի դիտավորությամբ, իսկ երկրորդի դեպքում՝ ինքնավստահությամբ: Յուրաքանչյուր դեպքում, կարելի է համաձայնել այն մոտեցմանը, որ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելը և ***օրենքի կամ այլ իրավական***

[1] ***Արա Գաբուզյան, Աննա Մարգարյան, Տիգրան Սիմոնյան***, *ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: 2022:*

[2] *Նույն տեղում:*

ակտերի պահանջները կատարելը հարաբերակցվում են որպես հատուկ և ընդհանուր նորմեր:

Միևնույն ժամանակ, Նոր օրենսգրքում քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի նախատեսմամբ առերևույթ հակասություն է առաջացել Նոր օրենսգրքի և Օրենքի վերաբերելի կարգավորումների միջև: Այսպես, թեև հիշատակված երկու իրավական ակտերն էլ, ըստ բովանդակության, ամրագրում են ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձի քրեական օրենսգրքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար իրավաչափության պայմանների պահպանման դեպքում քրեական պատասխանատվության ենթակա չլինելու մասին կարգավորումներ, այնուհանդերձ վերջիններում կիրառվել են էապես տարբերվող և իրարամերժ եզրույթներ:

Համապատասխանաբար, եթե Օրենքը խոսում է ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձի հանցագործության կատարման համար ***քրեական պատասխանատվությունից ազատման*** մասին, ապա Նոր օրենսգիրքը նախատեսում է, որ ***քրեական պատասխանատվության ենթակա չէ*** քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որն օրենքով սահմանված կարգով համագործակցել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ՝ հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են[1]:

Վերոգրյալ եզրույթների միջև զգալի տարբերությունների և խնդրի ամբողջական պատկերացման համար, կարծում ենք՝ անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ վերջինների էության բնորոշմանը:

Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այն պայմաններն են, որոնց առկայության դեպքում ***արտաքնապես հանցագործությանը նման և քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքի համար անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության[2], այսինքն՝ ենթակա չէ քրեական պատասխանատվության***:

Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները չպետք է շփոթել քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքեր հանդիսացող հանգամանքների հետ: Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու դեպքում (օրինակ՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով, գործուն զղջալու դեպքում, արտակարգ հանգամանքների դեպքում) անձի արարքը հանդիսանում է հանցագործություն, պարզապես օրենքով նախատեսված հիմքերի և պայմանների ուժով անձը դրա համար պատասխանատվության կամ

---

[1] *2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մաս:*

[2] ***Թումասյան Դ., Գրիգորյան Գ.,*** *Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Ուսումնական ձեռնարկ: ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Եր., «Լիմուշ», 2022, էջ 171:*

պատժի չի ենթարկվում: Մինչդեռ ***քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների պարագայում*** անձի արարքը, որը քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին վնաս է պատճառել, ***հանցագործություն չի հանդիսանում***, իսկ պայմաններից որոշների դեպքում իրավաչափ, երբեմն նաև հանրորեն օգտակար արարք է[1]:

Վերոգրյալ տարբերություններով պայմանավորված՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվել է, որ քրեական պատասխանատվությունը բացառող որևէ հանգամանքի առկայությունը քրեական հետապնդման չհարուցման կամ դադարեցման ռեաբիլիտացնող հանգամանք է[2], մինչդեռ անձի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր կամ Հատուկ մասի դրույթների ուժով քրեական պատասխանատվությունից ազատման ենթակա լինելու որևէ հանգամանքի առկայությունը քրեական հետապնդման չհարուցման կամ դադարեցման ոչ ռեաբիլիտացնող հանգամանք է[3]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի դեպքում, եթե պահպանված են վերջինիս իրավաչափության պայմանները, խոսք գնալ չի կարող հանցանքի մասին, իսկ քրեական պատասխանատվության բացառումը (քրեական պատասխանատվության ենթակա չլինելը) և քրեական պատասխանատվությունից ազատելը երբեք չեն կարող կիրառվել որպես փոխարինելի, նույն նշանակությունն ունեցող երևույթներ:

Այս համատեքստում հատկանշական է նաև այն, որ Նոր օրենսգրքի ո՛չ քրեական պատասխանատվությունից ազատմանը նվիրված 12-րդ գլխով, ո՛չ էլ Հատուկ մասի որևէ հոդվածով խոսք չի գնում ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց քրեական պատասխանատվությունից ազատման մասին: Մյուս կողմից, բնական է թվում այն միտքը, որ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձի կողմից համագործակցության ընթացքում հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում գործելիս և այդպիսի նպատակներին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցների բացակայության պայմաններում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը հանրորեն օգտակար նպատակներ է հետապնդում, որը չպետք է հանցագործություն համարվի:

Վերոգրյալի լույսի ներքո դիտարկելով Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը՝ կարող ենք պնդել, որ դրանում առկա են քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի էության հետ անհամատեղելի

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Բացառությամբ անմեղսունակության:*

[3] *2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված:*

արտահայտություններ, ինչպիսիք են՝ «հանցագործության կատարման համար» և «ազատվում են քրեական պատասխանատվությունից»:

Առաջացած հակասությունն իր հերթին ենթադրում է Օրենքի վերաբերելի դրույթում հետևյալ փոփոխությունների կատարումը և դրա համապատասխանեցումը Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածին. «հանցագործության կատարման համար» բառերը պետք է փոխարինվեն «քրեական օրենսգրքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար» բառերով, իսկ «ազատվում են քրեական պատասխանատվությունից» բառերը՝ «ենթակա չէ քրեական պատասխանատվության» բառերով:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցության իրավաչափության սահմանները

2.1. «Մարդու դեմ ուղղված» հատկանիշը

Ինչպես նշվել է նախորդիվ, Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որն օրենքով սահմանված կարգով համագործակցել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ՝ հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են:

Վերոնշյալ նորմի բովանդակությունից բխում են խնդրո առարկա քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության հետևյալ պայմանները՝

1. անձն օրենքով սահմանված կարգով հավաքագրվել է որպես ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձ,

2. անձը ներգրավված է եղել օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը,

3. քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պատճառվել է անձին հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում,

4. բացակայել են նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները:

Միայն վերոնշյալ բոլոր պայմանների միաժամանակյա առկայության դեպքում անձը ենթակա չի լինի քրեական պատասխանատվության քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար[1]:

Մյուս կողմից, Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է բացառություն, ըստ որի՝ անգամ նույն հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաչափության բոլոր պայմանների պահպանման դեպքում ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը ենթակա է քրեական

[1] *Եթե, իհարկե, առկա չէ քրեական պատասխանատվությունը բացառող որևէ այլ հանգամանք:*

պատասխանատվության: Տվյալ բացառությունը վերաբերում է ***մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք կատարելուն:***

Վերոնշյալ կարգավորման առնչությամբ մասնագետների տարակարծությունն են առաջացրել մասնավորապես այն հարցերը, թե հանցանքների որ խմբին են վերաբերում «մարդու դեմ ուղղված» և «ավարտված» հատկանիշները:

Իրավանորմի ***քերականական*** մեկնաբանումը[1] հնարավորություն է տալիս առանձնացնել իրավանորմի նշանակության հետևյալ տարբերակները.

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձը յուրաքանչյուր դեպքում ենթակա է քրեական պատասխանատվության՝

1. մարդու դեմ ուղղված ծանր ավարտված հանցանքի կատարման համար,

2. մարդու դեմ ուղղված ծանր չավարտված հանցանքի կատարման համար,

3. մարդու դեմ ուղղված առանձնապես ծանր ավարտված հանցանքի կատարման համար,

4. մարդու դեմ ուղղված առանձնապես ծանր չավարտված հանցանքի կատարման համար,

5. մարդու դեմ չուղղված առանձնապես ծանր ավարտված հանցանքի կատարման համար,

6. մարդու դեմ չուղղված առանձնապես ծանր չավարտված հանցանքի կատարման համար:

Նախ, դիտարկենք, թե արդյոք վերաբերում է «մարդու դեմ ուղղված» արտահայտությունն առանձնապես ծանր հանցանքներին: Վերոգրյալի համար անհրաժեշտ է կիրառել իրավանորմի ***համակարգային*** մեկնաբանման[2] եղանակը: Այսպես, Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրված բացառությունից բացառություն, որը կարող է օգտակար լինել առկա հարցի պարզաբանման համար: Հոդվածի նշված մասում ամրագրված է, որ եթե օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը մասնակցել է հանցավոր կազմակերպությանը կամ հանցանքը կատարել է հանցավոր կազմակերպության կազմում, որը նույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, և այդ ծանրացնող հանգամանքի շնորհիվ է հանցանքը համարվում առանձնապես ծանր կամ ծանր, կամ եթե նրա կողմից կատարված հանցանքն առանձնապես ծանր կամ ծանր է համարվում ***«առանձնապես խոշոր»*** չափով կատարած լինելու հատկանիշով, ապա դա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձին չի մեղսագրվում: Ընդ որում, հիշատակված իրավանորմը փոփոխվել է 2022 թվականի հունիսի 9-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և

[1] ***Հովհաննիսյան Գ.,*** *Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020, էջ 279:*

[2] *Նույն տեղում, էջ 294:*

լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-240-Ն օրենքով՝ «հանցանքը համարվում» և «կատարված հանցանքն» բառերից հետո «առանձնապես ծանր» բառերը փոխարինելով «առանձնապես ծանր կամ ծանր» բառերով[1]: Ուստի, Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումն ի սկզբանե վերաբերել է միայն նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված առանձնապես ծանր հանցանքներին:

Մարդու դեմ ուղղված հանցանքներն ամրագրված են Նոր օրենսգրքի 9-րդ բաժնում, որը ներառում է մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 23), առողջության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 24), կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունները (գլուխ 25), ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 26), սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 27), սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 28), ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 29): Նշված գլուխներում համապատասխանաբար ներառված են Հատուկ մասի 155-ից 251-րդ հոդվածները: Հիշատակված հոդվածների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ չկա գեթ մեկը, որը պարունակի առանձնապես խոշոր չափով կատարված լինելու որակյալ հատկանիշը և դրա արդյունքում համապատասխան արարքը համարվի ծանր հանցանք: Մասնավորապես, տվյալ որակյալ հատկանիշն առկա է միայն ծանրացնող հանգամանքներում կատարված հեղինակային և հարակից իրավունքները խախտելու (Նոր օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ) և ծանրացնող հանգամանքներում կատարված արտոնագրային իրավունքը խախտելու (Նոր օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ) դեպքում, որոնք հանդիսանում են միջին ծանրության հանցանքներ:

Մյուս կողմից, մարդու դեմ չուղղված բազմաթիվ հանցանքներ առանձնապես ծանր են համարվում անմիջապես առանձնապես խոշոր չափով կատարված լինելու որակյալ հատկանիշի արդյունքում (օրինակ՝ Նոր օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հասարակ և ծանրացնող հանգամանքներում կատարված ավազակությունները համարվում են ծանր հանցանքներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված առանձնապես խոշոր չափերով կատարված ավազակությունը՝ առանձնապես ծանր հանցանք):

Վերոգրյալից կարելի է կատարել երկու եզրահանգում: Նախ, Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման լույսի ներքո մեկնաբանելով նույն հոդվածի 2-րդ մասի կարգավորումը՝ կարող ենք արձանագրել, որ «մարդու դեմ ուղղված» հատկանիշը չի վերաբերում առանձնապես ծանր հանցանքներին:

[1] *Վերոհիշյալ օրենսդրական փոփոխության ուսումնասիրության շրջանակներում փորձեր են ձեռնարկվել ծանոթանալ վերջինիս հիմնավորումներին, այսինքն՝ դրա հիմքում դրված դատողություններին, եզրահանգումներին, ինչպես նաև հետապնդվող նպատակին, որպիսին, սակայն, առկա չի եղել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակված համապատասխան նախագծին կից:*

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ վերոգրյալը նշանակում է, որ յուրաքանչյուր առանձնապես ծանր հանցանք՝ մարդու դեմ ուղղված կամ չուղղված, բավարարում է ամրագրված պահանջին, քանի որ թեև նշված հատկանիշն ուղղակիորեն վերաբերում է ծանր հանցանքներին, իրավանորմի մեկնաբանման ***a fortiori*** կանոնը[1] տարածում է այն նաև առանձնապես ծանր հանցանքների վրա:

Բացի այդ, անհրաժեշտ է ընդգծել, որ Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-մասի կարգավորումն առաջացնում է համակարգային հակասություն նույն հոդվածի 2-րդ մասի հետ այնքանով, որքանով նախատեսում է, որ ***«առանձնապես խոշոր» չափով կատարած լինելու*** հատկանիշը վերաբերում է նաև մարդու դեմ ուղղված ծանր հանցանքներին՝ հաշվի առնելով, որ Նոր օրենսգրքով նախատեսված մարդու դեմ ուղղված որևէ ծանր հանցանք չի պարունակում տվյալ հատկանիշը:

2.2. «Ավարտված» հատկանիշը

Հաջորդիվ, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե հանցանքների որ խմբին է վերաբերում Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ***«ավարտված»*** հատկանիշը:

Մասնագետների մի մասը գտնում է, որ «ավարտված» հատկանիշը պետք է վերաբերի ինչպես մարդու դեմ ուղղված ծանր հանցանքներին, այնպես էլ յուրաքանչյուր առանձնապես ծանր հանցանքին: Այսպես, *ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցի* հեղինակները գտնում են, որ վերը նշված հանցագործությունների ***նախապատրաստության*** կամ ***հանցափորձի*** համար համագործակցող անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե օրենքով սահմանված նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են: Սակայն, եթե կատարվում է մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ապա նշված անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե, իհարկե, նրա արարքում առկա չեն քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքներ[2]: Նման մոտեցումը կիսում են նաև այլ մասնագետներ[3]:

Մյուս կողմից, որոշ մասնագետներ այն կարծիքին են, որ «ավարտված» հատկանիշը բացառապես վերաբերում է առանձնապես ծանր հանցանքներին, ինչը հիմնականում պայմանավորված է իրավանորմի շարադասական դասավորվածությամբ՝ «ավարտված» բառը հաջորդում է «առանձնապես ծանր» բառակապակցությանը:

---

[1] ***Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.,*** *Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատ.: Եր., «Լուսաբաց հրատարակչություն», 2023, էջ 372:*

[2] ***Արա Գաբուզյան, Աննա Մարգարյան, Տիգրան Սիմոնյան****, ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: 2022:*

[3] ***Գևորգ Բարսեղյան,*** *Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն 2025, Vol. 16, No. 1(42), հունիս, 74-104,*
https://doi.org/10.46991/BYSU.C/2025.16.1.074

Այս առնչությամբ գտնում ենք, որ առաջին խումբ հեղինակների մոտեցումն առավել հիմնավոր է: Նախ, եթե օրենսդրի կամքը լիներ «ավարտված» հատկանիշի միայն առանձնապես ծանր հանցանքներին վերաբերելը, ապա իրավանորմի տեքստում հանցանքի խմբերի դասավորվածության պարզ փոփոխությամբ կարելի էր բացառել հնարավոր որևէ այլ մեկնաբանումը, օրինակ, եթե կարգավորումը շարադրվեր հետևյալ կերպ. «*2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը ենթակա է քրեական պատասխանատվության առանձնապես ծանր ավարտված կամ մարդու դեմ ուղղված ծանր հանցանք կատարելու դեպքում*»:

Բացի այդ, որևէ ծանրակշիռ հիմնավորումից զուրկ է թվում այնպիսի մոտեցումը, որով առաջնորդվելու դեպքում ստացվելու է մի իրավիճակ, երբ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձը քրեական պատասխանատվության է ենթակա մարդու դեմ ուղղված ծանր որևէ հանցանքի նախապատրաստության համար, եթե պահպանված են Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավաչափության այլ պայմանները: Նման մոտեցումն իմաստազրկում է թե՛ խնդրո առարկա քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի էությունը, թե՛ ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցելու ինստիտուտը:

Ավելին, նկատի ունենալով, որ խնդրո առարկա կարգավորման նպատակն ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց հնարավոր կամայականությունների և ոչ իրավաչափ վարքագծի կանխարգելումն է, ինչպես նաև նրանց գործողությունների թույլատրելի սահմանաչափի և բացարձակ արգելքների նախատեսումը՝ անտրամաբանական է թվում, որ անձը համադրելի իրավիճակում և քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության այլ պայմանների պահպանման դեպքում քրեական պատասխանատվության է ենթակա լինելու զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված ավազակության նախապատրաստման (Նոր օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ), բայց ոչ, օրինակ, բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված ավազակության փորձի (Նոր օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-մասի 2-րդ կետ) կամ ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կատարված ահաբեկչության նախապատրաստման (Նոր օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ) համար:

Արդյունքում, կարող ենք արձանագրել, որ Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «ավարտված» հատկանիշը վերաբերում է և՛ ծանր, և՛ առանձնապես ծանր հանցանքներին:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում ենք հետևյալին.

1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածին:

2. Անհրաժեշտ է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում «հանցագործության կատարման համար» բառերը փոխարինել «քրեական օրենսգրքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար» բառերով, իսկ «ազատվում են քրեական պատասխանատվությունից» բառերը՝ «ենթակա չէ քրեական պատասխանատվության» բառերով:

3. Նոր օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «մարդու դեմ ուղղված» հատկանիշը վերաբերում է ծանր հանցանքներին:

4. Նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումն առաջացնում համակարգային հակասություն այնքանով, որքանով նախատեսում է, որ ***«առանձնապես խոշոր»*** *չափով կատարած լինելու»* հատկանիշը վերաբերում է նաև մարդու դեմ ուղղված ծանր հանցանքներին:

5. Նոր օենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «ավարտված» հատկանիշը վերաբերում է թե՛ մարդու դեմ ուղղված ծանր, թե՛ բոլոր առանձնապես ծանր հանցանքներին:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք:

2. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրք:

3. 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:

4. 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունված և նույն թվականի դեկտեմբերի 8-ին ուժի մեջ մտած «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք:

5. **Թումասյան Դ., Գրիգորյան Գ.,** Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Ուսումնական ձեռնարկ: ՀՀ ոստիկանության կրթահամալիր: Եր., «Լիմուշ», 2022, 480 էջ:

6. **Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.,** Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատ.: Երևան, «Լուսաբաց հրատարակչություն», 2023, 476 էջ:

7. **Հովհաննիսյան Գ.,** Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր., «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020, 448 էջ:

8. **Արա Գաբուզյան, Աննա Մարգարյան, Տիգրան Սիմոնյան,** ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: 2022:

9. **Գևորգ Բարսեղյան,** Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն 2025, Vol. 16, No. 1(42), հունիս, 74-104, https://doi.org/10.46991/BYSU.C/2025.16.1.074

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СОТРУДНИЧЕСТВА С ОСУЩЕСТВЛЯЮЩИМИ ОПЕРАТИВНО-РАЗЫСКНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНАМИ КАК ИСКЛЮЧАЮЩЕГО УГОЛОВНУЮ ОТВЕТСТВЕННОСТЬ ОБСТОЯТЕЛЬСТВА

Аннотация

Статья посвящена новому исключающему уголовную ответственность обстоятельству, предусмотренному Уголовным кодексом Республики Армения, принятым 5 мая 2021 года, а именно сотрудничеству с органами, осуществляющими оперативно-разыскную деятельность. Основное внимание в статье уделяется исключениям из условий правомерности данного обстоятельства, прямо установленным в Кодексе.

Актуальность выбранной темы обусловлена разногласиями между специалистами по рассматриваемому вопросу, очевидными недостатками соответствующих законодательных регулирований, а также необходимостью всестороннего толкования соответствующего законодательства, что и является основной целью статьи.

В работе предпринята попытка всеобъемлющего толкования законодательства, уделяя особое внимание спорным вопросам, вызвавшим разногласия между специалистами. В частности, поднимаются следующие вопросы:

- К какой группе преступлений относятся признаки «оконченное» и «направленное против личности», предусмотренные частью 2 статьи 41 Уголовного кодекса Республики Армения?
- Существует ли противоречие между частями 2 и 3 статьи 41 Уголовного кодекса Республики Армения?
- Соответствует ли часть 1 статьи 13 Закона Республики Армения «Об оперативно-разыскной деятельности» статье 41 Уголовного кодекса Республики Армения, которая служит необходимой материально-правовой основой для её практического применения?

Ключевые слова: оперативно-разыскная деятельность, сотрудничающее лицо, исключающее уголовную ответственность обстоятельство, освобождение от уголовной ответственности.

SOME ISSUES OF COOPERATION WITH BODIES CARRYING OUT OPERATIONAL-INTELLIGENCE ACTIVITIES AS A CONDITION EXCLUDING CRIMINAL LIABILITY

Annotation

The article is devoted to a new circumstance excluding criminal liability, introduced by the Criminal Code of the Republic of Armenia, adopted on May 5, 2021-namely, cooperation with bodies engaged in operational-intelligence activities. The article primarily examines the exceptions to the conditions of legality of this circumstance, as expressly defined by the Code.

The relevance of the topic is underscored by the disagreement among specialists regarding the issue, the apparent shortcomings of the relevant legislative regulations, and the need for a comprehensive interpretation of the legislation, which constitutes the main objective of the work.

The article seeks to provide such an interpretation, paying particular attention to problematic aspects and matters that have caused professional disagreement. Specifically, it raises the following questions:

- To which group of crimes do the features “completed” and “directed against a person,” as stipulated in Part 2 of Article 41 of the Criminal Code of the Republic of Armenia, refer?
- Is there a contradiction between Parts 2 and 3 of Article 41 of the Criminal Code of the Republic of Armenia?
- Does Part 1 of Article 13 of the Law of the Republic of Armenia “On Operative-Intelligence Activities” correspond to Article 41 of the Criminal Code of the Republic of Armenia, which serves as the necessary substantive legal basis for ensuring its practical implementation?

Keywords: operative-intelligence activities, cooperating person, circumstance excluding criminal liability, exemption from criminal liability.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 21.10.2025 թ., տրվել է գրախոսության 21.10.2025 թ., ընդունվել է տպագրության 25.10.2025 թ.: